

1.3. Գներ և սակագներ

2003թ. հունվարին գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(%-ով՝ նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
Հունվար	104.1	92.4	100.0	99.6	100.2	100.8
2003թ. հունվարը 2002թ. հունվարի նկատմամբ	103.9	106.6*)	100.3	103.3	100.7*)	103.5*)

*) 2003թ. հունվարի և 2002թ. հունվարի ընթացիկ գներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:

³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:


⁶⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

Սպառողական գներ: 2003թ. հունվարին ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 4.1% սղաճ, ինչը 1.9 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա հունվարի ցուցանիշից (2.2%): Դրան մեծապես նպաստել են պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխությունները:

2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 104.1%, այդ թվում պարենային ապրանքների՝ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 106.0%, ոչ պարենային ապրանքների՝ 100.4%, ծառայությունների սակագների՝ 100.4%:


Սպառողական գների հավելածը 1995-2003թթ. հունվարին

(%-ով, նախորդ ամսվա նկատմամբ)



2003թ. հունվարին 2002թ. հունվարի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 103.9%, այդ թվում պարենային ապրանքների՝ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 104.6%, ոչ պարենային ապրանքների՝ 103.5%, ծառայությունների սակագների՝ 102.0%:

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2003թ. հունվարին տոկոսներով (Նախորդ ամիսը = 100)



Արտարժույթային շուկա: 2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ հանրապետության սպառողական շուկայում գրանցված 4.1% գնաճը ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.3% նվազումով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում տվյալ ցուցանիշները դրսևորել են նույն միտումը. սպառողական գներն աճել են 2.2%, իսկ հաշվարկային փոխարժեքը նվազել է 0.1%: 2003թ. հունվարին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը կազմել է 582.97 դրամ, ինչը 3.3% գերազանցել է 2002թ. հունվարի համապատասխան ցուցանիշը (564.08 դրամ):

Պարենային ապրանքների գներ: 2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 6.7% գնաճ, ինչը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը 3.0 տոկոսային կետով (3.7%): Հունվարին, սեզոնայնությամբ պայմանավորված, զգալի գնաճ է արձանագրվել բանջարեղենի, մրգի, ձվի ապրանքախմբերում:

2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ գրանցված բանջարեղենի և կարտոֆիլի 38.4% գնաճը 15.7 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը, ինչը գլուխ սոխի (74.6%), լուլիկի (57.8%), վարունգի (51.6%), սխտորի (50.3%), կաղամբի (38.6%) գնաճի արդյունք է: Կարտոֆիլի, ճակնդեղի և գազարի գնաճը նշված ժամանակահատվածում կազմել է համապատասխանաբար 4.0%, 14.5 և 24.6%: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է բանջարեղենի և կարտոֆիլի 19.9-49.2% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Վաղարշապատում: Երևանում բանջարեղենի և կարտոֆիլի գնաճը կազմել է 43.1%:

2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է մրգի 29.7% գնաճ, ինչը գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը 17.0 տոկոսային կետով (12.7%): Դրան մեծապես նպաստել է տանձի (57.0%), խնձորի (44.7%), մանդարինի (42.6%), ադամաթզի (31.6%) գնաճը: Նշված ժամանակահատվածում խաղողի և կիտրոնի գնաճը կազմել է համապատասխանաբար 17.2% և 5.8%: Հանրապետության դիտարկված բոլոր բնակավայրերում արձանագրվել է մրգի 7.0-51.7% գնաճ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Վաղարշապատում): Մայրաքաղաքում մրգի գնաճը կազմել է 33.7%:

Չվի միջին հանրապետական գինը 2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ աճել է 5.3%, ինչը դիտարկված բոլոր բնակավայրերում արձանագրված 3.5-12.0% գնաճի արդյունք է:

2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ մսամթերքի ապրանքախմբում գրանցվել է 2.5% գնաճ՝ գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը 1.0 տոկոսային կետով: Տավարի մսի գնաճը նշված ժամանա-

կահատվածում կազմել է 3.1%, խոզինը՝ 2.4%, ոչխարինը՝ 0.7%: Հանրապետության դիտարկված 8 բնակավայրերում արձանագրվել է մսամթերքի 0.2-3.4% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է մայրաքաղաքում:

Կաթնամթերքի, կենդանական և բուսական յուղի, սուրճի, թեյի, կակաոյի, ոչ ոգելից խմիչքի, շաքարավազի ապրանքախմբերում 2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 0.6-1.3% գնաճ:

Ձկնամթերքի ապրանքախմբում 2003թ. հունվարին նախորդ ամսվա համեմատ գրանցվել է նկատելի գնանկում (21.3%), ինչը հիմնականում թարմ ձկան (սիգ) 25.8% գնանկման արդյունք է: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում հունվարին գրանցվել է ձկնամթերքի 30.8-3.6% գնանկում (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Երևանում), իսկ եղեգնածորում՝ 4.7% գնաճ:

Հացամթերքի և այլ մթերքների գները 2003թ. հունվարին նախորդ ամսվա համեմատ նվազել են 0.2% և 0.1%:

2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ ոգելից խմիչքի և ծխախոտի գներն աճել են 0.1%, ընդ որում ոգելից խմիչքի գնաճը կազմել է 0.9%, իսկ ծխախոտի գները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

	2003թ. հունվարը		2002թ. հունվարը 2001թ. հունվարի նկատմամբ
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. հունվարի նկատմամբ	
<i>(%-ով)</i>			
Պարենային ապրանքներ			
(ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	106.0	104.6	101.0
Պարենային ապրանքներ	106.7	106.2	100.3
հացամթերք	99.8	98.3	98.4
մսամթերք	102.5	101.5	106.7
ձկնամթերք	78.7	97.6	126.7
կաթնամթերք	100.6	99.5	100.7
ձու	105.3	114.7	103.8
կենդանական և բուսական յուղ	100.6	101.5	99.6
միրգ	129.7	148.3	115.7
բանջարեղեն և կարտոֆիլ	138.4	123.5	89.3
շաքարավազ	101.3	102.0	102.2
սուրճ, թեյ, կակաո	100.6	99.1	99.1
հրուշակեղեն	102.4	103.7	99.2
այլ մթերքներ	99.9	99.9	98.8
ոչ ոգելից խմիչք	100.7	102.2	98.7
<i>Ոգելից խմիչք և ծխախոտ</i>	100.1	92.1	103.6

Ոչ պարենային ապրանքների գներ: Ոչ պարենային ապրանքների շուկայում 2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ գրանցված 0.4% գնաճին մեծապես նպաստել է ոսկերչական ապրանքների՝ 7.7%, վառելիքի՝ 4.7% (պայմանավորված վառելափայտի 37.1% գնաճով), գորգեղենի՝ 3.1%, տեքստիլեղենի՝ 1.5% գնաճը: Կենցաղային էլեկտրաապրանքների, գեղահարդարման ապրանքների, լվացամիջոցների, հագուստի և կտորեղենի, կահույքի ապրանքախմբերում արձանագրվել է 0.1-0.2% գնաճ: Մշակույթի ապրանքների, դեղամիջոցների, շինանյութերի, այգեգործական ապրանքների, խոհանոցային սպասքի, գրենական պիտույքների, կոշիկեղենի գները նշված ժամանակահատվածում նվազել են 2.0-0.1%, իսկ անձնապիտո ապրանքների գները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ բենզինի գինն աճել է 1.7%, դիզելային վառելիքինը՝ 11.1%:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

(%-ով)

	2003 թվականի		2002թ. հունվարը 2001թ. հունվարի նկատմամբ
	հունվարը		
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. հունվարի նկատմամբ	
Ոչ պարենային ապրանքներ	100.4	103.5	99.0
<i>այդ թվում.</i>			
հազուստ և կտորեղեն	100.2	103.4	100.4
վառելիք	104.7	127.9	91.4
կահույք	100.2	101.9	100.8
գորգեղեն	103.1	103.9	100.4
տեքստիլեղեն	101.5	98.7	99.7
կենցաղային էլեկտրաապրանքներ	100.1	100.3	98.4
խոհանոցային սպասք	99.9	101.4	103.0
լվացամիջոցներ	100.1	99.5	106.4
շինանյութեր	99.1	98.5	100.8
այգեգործական ապրանքներ	99.2	96.7	98.9
դեղամիջոցներ	98.9	94.1	96.9
անձնական օգտագործման մեքենա ներ և բենզին	102.3	112.0	89.9
մշակույթի ապրանքներ	98.0	99.7	100.4
գրեական պիտույքներ	99.9	99.8	103.9
գեղահարդարման ապրանքներ	100.1	101.0	101.8
ոսկերչական ապրանքներ	107.7	114.9	98.2
անձնապիտո ապրանքներ	100.0	100.9	99.4

Ծառայությունների սակագներ: Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ գրանցված սակագների 0.4% հավելաճը հիմնականում պայմանավորվել է հանրային սննդի (2.4%), տրանսպորտի (1.4%, պայմանավորված միջբաղաքային տրանսպորտի ծառայությունների սակագների 2.1% հավելաճով), կապի (0.5%) ծառայությունների սակագների հավելաճով: Նշված ժամանակահատվածում գրանցվել է կրթության համակարգի սակագների 0.2% հավելաճ և մշակույթի ոլորտի, հանգստի կազմակերպման, կենցաղային, բուժսպասարկման ծառայությունների սակագների 2.5-0.1% նվազում: Բնակարանային-կոմունալ և իրավական ու բանկային ծառայությունների սակագները մնացել են նախորդ ամսվա սակագների մակարդակին:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(%-ով)

	2003 թ. հունվարը		2002թ. հունվարը 2001թ. հունվարի նկատմամբ
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ		
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. հունվարի նկատմամբ	
Պ առայություններ, ընդամենը	100.4	102.0	100.1
<i>այդ թվում.</i>			
կենցաղային	99.9	100.1	100.8
բնակարանային-կոմունալ	100.0	100.1	99.9
բուժսպասարկման	99.9	98.4	96.2
տրանսպորտի	101.4	102.1	99.8
կապի	100.5	115.8	101.2
մշակույթի	97.5	116.1	102.7
կրթության համակարգի	100.2	103.1	104.5
հանգստի կազմակերպման	98.1	106.0	100.5
հանրային սննդի	102.4	101.7	100.3
իրավական և բանկային	100.0	100.0	100.0

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: 2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ հանրապետության դիտարկվող բոլոր բնակավայրերում սպառողական գներն աճել են 2.4-5.7%-ով, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Վաղարշապատում: Հանրապետության խոշոր քաղաքներում՝ Երևանում, Գյումրիում և Վանաձորում, սպառողական գների հավելաճը կազ-

մել է համապատասխանաբար 4.5%, 3.5 և 3.3%:

Պարենային ապրանքների շուկայում 2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է 4.2-9.2% գնաճ, ընդ որում գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Վաղարշապատում:

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2003թ. հունվարի 30-ի դրությամբ

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Ձու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
ԳՅ, միջինը	1142	1238	1332	641	461	263	174	215	97	342
<i>այդ թվում.</i>										
Երևան	1158	1258	1330	645	431	264	165	238	100	313
Գյումրի	1075	1250	1313	618	488	265	188	143	55	413
Վանաձոր	1083	1100	1275	636	480	252	175	208	92	391
Վաղարշապատ	1150	1200	1250	570	500	260	200	150	120	400
Թալին	1200	1200	1400	650	500	260	200	200	150	300
Դիլիջան	1100	1200	1400	700	500	263	200	200	100	350
Հրազդան, Չարենցավան	1200	1280	1300	650	500	260	200	200	80	280
Եղեգնաձոր	1100	1300	1400	660	550	260	250	150	150	400
Մարտունի	1000	1200	1400	650	550	270	120	200	60	550
Կապան	1160	1200	1480	654	550	272	210	190	110	350

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2003թ. հունվարի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 5905 դրամ, ինչը ընդամենը 4 դրամով է գերազանցել նույնանուն ապրանքատեսակների 2002թ. հունվարի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (5901դրամ):

Հանրապետությունում դիտարկված 7 քաղաքներում 2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.1-0.8% գնաճ (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Կապանում), Եղեգնաձորում՝ 0.1% գնանկում, իսկ Վաղարշապատ և Թալին քաղաքներում պահպանվել է ոչ պարենային ապրանքների նախորդ ամսվա գների մակարդակը:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ հետազոտված քաղաքներից 5-ում գրանցվել է սակագների 0.1-2.5% հավելաճ, Դիլիջան և Եղեգնաձոր քաղաքներում՝ սակագների համապատասխանաբար 0.2% և 0.4% նվազում, իսկ մյուս 3 քաղաքներում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի

(%-ով)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում				ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից			
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
ԳՅ, ընդամենը	104.1	105.0	106.0	106.7	100.4	100.4
<i>այդ թվում.</i>						
Երևան	104.5	105.4	106.6	107.4	100.5	100.3
Գյումրի	103.5	103.7	104.6	105.1	100.3	102.5
Վանաձոր	103.3	104.0	104.8	105.4	100.5	100.2
Վաղարշապատ	105.7	106.9	108.6	109.2	100.0	100.0
Թալին	102.4	103.0	103.7	104.2	100.0	100.0
Դիլիջան	103.0	103.8	104.7	105.3	100.1	99.8

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում				ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից			
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
Հրազդան, Չարենցավան	103.4	104.1	105.0	105.6	100.2	100.1
Եղեգնաձոր	102.4	103.1	103.8	104.2	99.9	99.6
Մարտունի	103.3	103.7	104.5	105.0	100.2	101.5
Կապան	103.6	104.5	105.3	105.9	100.8	100.0

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս: 2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի 7.6% գնանկում:

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի (%-ով)

	2003 թ. հունվարը		2002թ. հունվարը 2001թ. հունվարի նկատմամբ
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. հունվարի նկատմամբ	
Ամբողջ արդյունաբերությունը	92.4	106.6	101.1
<i>այդ թվում</i>			
էլեկտրաէներգետիկա	84.3	110.7	100.7
գունավոր մետալուրգիա	104.6	130.2	99.5
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	97.8	121.3	78.0
մեքենաշինություն	97.6	88.5	97.3
այլ արդյունաբերական արտադրություն (ոսկերչական արդյունաբերություն)	64.1	84.1	105.1
անտառային, փայտամշակման, թղթի-ցեյլոլոզի արդյունաբերություն	66.0	125.9	119.8
շինանյութերի արդյունաբերություն	95.3	104.0	94.9
թեթև արդյունաբերություն	110.6	103.6	79.9
սննդի (ներառյալ ալյուրի ու համակցված կերերի) արդյունաբերություն	101.6	99.1	102.9
հրատարակչական գործերի արտադրություն	85.5	113.1	104.9

Բեռնափոխադրումների սակագների ինդեքս: 2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ տրանսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագները նվազել են 0.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորվել է խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների 0.6% նվազումով: Նշված ժամանակահատվածում արձանագրվել է երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների 0.2% նվազում, ավտոմոբիլային տրանսպորտով՝ 3.7% հավելաճ, իսկ օդային տրանսպորտում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

2003թ. հունվարին 2002թ. հունվարի համեմատ տրանսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 103.3%, այդ թվում երկաթուղային տրանսպորտով՝ 104.1%, ավտոմոբիլայինով՝ 105.6%, օդայինով՝ 99.7%, խողովակաշարային տրանսպորտով՝ 103.3%:

Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներ: 2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ գյուղատնտեսական մթերքի իրացման գնաճը կազմել է 0.2%, ինչը 1.6 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից:

2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ բուսաբուծական մթերքի իրացման գնանկումը հանրապետությունում կազմել է 2.7%, ինչին մեծապես նպաստել է կերային մշակաբույսերի (11.0%), բանջարեղենի (3.4%) գնանկումը: Նշված ժամանակահատվածում մրգի, հացահատիկային մշակաբույսերի ապրանքախմբերում գրանցվել է համապատասխանաբար 2.6% և 0.5% գնանկում:

Գյուղատնտեսական մթերքի իրացման միջին գները ՀՀ-ում 1998-2003թթ. հունվարին
(դրամով)

	Չափի միավորը	1998	1999	2000	2001	2002	2003
Ցորեն	կգ	159	109	103	102	100	80
Գարի	- „,-	113	112	76	80	89	83
Լոբի	- „,-	277	316	333	412	420	407
Կարտոֆիլ	- „,-	112	91	92	118	125	141
Կաղամբ	- „,-	39	59	26	92	37	38
Գազար	- „,-	78	56	49	51	45	48
Գլուխ սոխ	- „,-	159	97	57	193	160	...
Խնձոր	- „,-	145	136	118	133	142	146
Տանձ	- „,-	153	206	104	132	140	209
Խաղող	- „,-	395	246	244	...	200	317
Ընկույզ (կեղևով)	- „,-	732	785	661	756	921	928
Մեղր	- „,-	2500	2488	2463	2691	2603	2507
Միս տավարի	- „,-	846	858	811	809	898	889
Միս ոչխարի	- „,-	775	673	750	791	731	866
Միս խոզի	- „,-	1523	899	817	1020	1017	858
Կաթ	լ	166	119	112	121	117	125
Մածուն	- „,-	190	194	178	178	186	182
Պանիր (յուղոտ)	կգ	947	953	867	890	844	818
Չուլ	հատ	56	51	48	46	44	48
Միամյա խոտեր	կգ	27	22	21	40	18	19
Բազմամյա խոտեր	- „,-	36	27	21	32	31	...

... _ դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել

2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է անասնապահական մթերքի իրացման 2.7% գնաճ, ինչը հիմնականում կաթնամթերքի՝ 6.1% և կաշվեհումքի՝ 9.5% գնաճի արդյունք է: Սսամթերքի գնաճը նշված ժամանակահատվածում կազմել է 1.9%, իսկ ձվի գնանկումը՝ 7.0%:

Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներն ըստ մարզերի

(% -ով)

	Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2003թ. հունվարին		2003թ. հունվարին	
	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. հունվարի նկատմամբ	2002թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. հունվարի նկատմամբ
ՀՀ, ընդամենը	100.2	100.7	100.8	103.5
այդ թվում.				
Արագածոտն	99.1	106.2	101.0	103.0
Արարատ	100.3	101.5	103.5	101.2
Արմավիր	102.1	108.0	100.6	101.7
Գեղարքունիք	96.8	101.9	101.7	105.4
Լոռի	102.0	99.1	99.0	101.5
Կոտայք	92.7	99.3	101.5	104.1
Շիրակ	101.4	98.1	100.8	101.6
Սյունիք	101.1	100.0	100.9	102.5
Վայոց ձոր	105.5	101.0	101.7	102.6
Տավուշ	105.4	83.4	103.6	102.2

2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի համեմատ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների 0.8% հավելաճը պայմանավորվել է գյուղատնտեսական մանր գործիքների (12.3%), սերմացուների և տնկիների (3.0%), էներգիայի և քսայուղերի (1.6%), անասունների (1.3%), անասնակերի (1.2%) գնման գնաճով: Նշված ժամանակահատվածում գյուղատնտեսական վճարովի ծառայությունների սակագները նվազել են 21.3%, իսկ պարարտանյութերի, շինանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների գնման գները մնացել են նախորդ ամսվա գների մակարդակին: